



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**«18» հունիսի 2018 թվական**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/5**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ ԶՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ  
ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ**

**ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Ասատրյանը:**

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 26 (քսանվեց) անդամներ՝** Ս.Բալասանյանը, Ա.Ադամյանը, Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյանը, Վ.Եղիզարյան, Ա.Գրիգորյանը, Գ.Սարգսյանը, Կ.Միքայելյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ս.Աստոյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Ադանյանը, Ռ.Սարգսյանը, Ա.Մխիթարյանը, Ս.Մարտիրոսյանը, Հ.Եղիազարյանը, Լ.Բարսեղյանը, Ք.Մկրտչյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Վարդանյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը:

**Նիստին հրավիրված են և մասնակցում են՝** համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը, ինչպես նաև ԶԼՄ-ների և ՀԿ-ների ներկայացուցիչներ:

**ԼՍԵՑԻՆ.**

- 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԶՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26  
դեմ - 0  
ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի՝ 2018 թվականի հունիսի 18-ի հերթական հինգերորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 167-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի նորընտիր ավագանու խմբակցությունների ստեղծման մասին» N 167-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 153-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 153-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) ավելացնել բյուջեի ֆոնդային մասի եկամուտները (հողի իրացումից մուտքեր)՝ 40.000.000 (քառասուն միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամով՝ համապատասխանաբար ավելացնելով ֆոնդային մասի ծախսերը,

2) ավելացնել բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը 59.000.000 (հիսունինը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամով և այն ուղղել ֆոնդային մաս:

2. Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար NN 1, 2 ,3, 4 հավելվածների:

3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել սույն որոշման 1-ին կետերում նշված փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**4. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԶԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայտարարել չկայացած՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կողմից Գյումրի քաղաքի փողոցների երթևեկելի մասի ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված (ծածկագիր՝ ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՇՁԲ-01/18) բաց մրցույթի ընթացակարգը՝ (այսուհետ՝ ընթացակարգ) գնման պահանջի գոյություն ունենալը դադարելու պատճառով:  
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը ապահովել որոշման 1-ին կետում նշված ընթացակարգը չկայացած հայտարարելու հետ կապված բոլոր գործողությունների կատարումը՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց  
ԼՍԵՑԻՆ.**

**5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՀԱՇՎԵԿԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(Ձեկուցող՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 21  
դեմ - 5 (Ս.Աստոյան, Ա.Խաչատրյան, Ա.Աղանյան, Ռ.Սարգսյան, Ա.Մխիթարյան)  
ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Թույլատրել կազմակերպության գույքի դուրսգրումը՝ համաձայն հավելվածի:  
2. Գույքի դուրսգրման գործընթացի կազմակերպումը և դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը վերապահել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտով ստեղծվելիք հանձնաժողովին:  
3. Դուրսգրված գույքի կամ նրա առանձին հանգույցների, նյութերի, դետալների և մասերի օրենքով սահմանված կարգով հնարավոր վաճառքից ստացված միջոցների բաշխումը (ծախսման ուղղությունները) վերապահել համայնքի ղեկավարին:  
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց  
ԼՍԵՑԻՆ.**

**6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼԻԱՆԱ»  
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ,  
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(Ձեկուցող՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**  
կողմ - 26  
դեմ - 0  
ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Կազմակերպությանը, որպես նվիրատվություն, հատկացնել 280 000 (երկու հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ կազմակերպության խմբասենյակում ջեռուցման համակարգ տեղադրելու համար:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՆԱՀՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Կազմակերպությանը, որպես նվիրատվություն, հատկացնել 255 000 (երկու հարյուր հիսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ կազմակերպության ջրատաքացուցիչները և ցնցուղային համակարգը նորոգելու նպատակով:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**8. ԳՐԻԳՈՐ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Գրիգոր Խաչատրյանին հատկացնել 50 000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**9. ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 164 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՉՈՐՍ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Թվով 164 (մեկ հարյուր վաթսունչորս) անձանց կանխիկ հատկացնել 1 700 000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**10. ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ամրացված (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1373247) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 5688,21 (հինգ հազար վեց հարյուր ութսունութ ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, 131 757 763 (մեկ հարյուր երեսունմեկ միլիոն յոթ հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր վաթսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ հաշվեկշռային արժեքով շենք-շինությունների՝ համաձայն հավելվածի և դրանցով

ծանրաբեռնված 21,0 (քսանմեկ) հեկտար մակերեսով հողամասի (այսուհետ՝ գույք) նվիրատվությունը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել Գյումրի համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Որոշումն ընդունվեց

**11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**  
(Ձեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

**12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**  
(Ձեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ - 17

դեմ - 4 (Լ.Բարսեղյան, Ք.Մկրտչյան, Ա.Գրիգորյան, Ա.Վարդանյան)

ձեռնպահ - 5 (Ս.Աստոյան, Ա.Խաչատրյան, Ա.Աղանյան, Ռ.Սարգսյան, Ա.Մխիթարյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, առանձնացված հողամասերը տրամադրել մրցույթով կառուցապատման իրավունքով և սահմանել հողամասերի վարձավճարների մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

**13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԱՆԱԿԻ ՊՈՂՈՏԱ N 2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇՎԱՔԱՐԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶՔԱԴԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ - 22

դեմ - 0

ձեռնպահ - 4 (Լ.Բարսեղյան, Ք.Մկրտչյան, Ա.Գրիգորյան, Ա.Վարդանյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտա N 2/3 հասցեում ինքնակամ կառուցված 33 (երեսուներեք) քառակուսի մետր մակերեսով շվաքարանը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 33 (երեսուներեք)

քառակուսի մետր մակերեսով հողամասը 15 (տասնհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը կառուցած Արսեն Սամսոնի Խաչատրյանին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շվաքարանի և հողամասի վարձակալության վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 396 000 (երեք հարյուր իննսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել գույքի վարձակալության պայմանագիր:

Որոշումն ընդունվեց

**14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 199-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 199-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

- 1) 11-րդ տողի 6-րդ սյունակի «2 300 000» թիվը փոխարինել «1 000 000» թվով:

Որոշումն ընդունվեց

**15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի N 54-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասի 9-րդ փողոց N 5 հասցեում գտնվող դպրոցական շենքի պահպանման և սպասարկման համար զբաղեցրած 2,527886 հեկտար մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին» N 54-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

- 1) վերնագրում և որոշման մեջ «նվիրաբերել» բառը փոխարինել «անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

**16. ՎԱՀԱՆ ՉԵՐԱՋԻ ԱՐՁԱՆԸ ՏԵՂԱԴԻՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Տալ համաձայնություն Վահան Չերազի արձանը Գյումրի քաղաքի Չերազի փողոցի սկզբնամասում տեղադրելուն:

**Որոշումն ընդունվեց**

**17. ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2011-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ 2011-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՎԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Սահմանել արտոնություն քաղաքացի Տիգրան Գևորգի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի 2011-2012 թվականների գույքահարկի մայր գումարների և 2011-2017 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժերի նկատմամբ՝ ազատելով գույքահարկի 247 683 (երկու հարյուր քառասունյոթ հազար վեց հարյուր ութսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 05-Ի N 56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկուցող՝ Գ.ՄԿՐՏՉՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 05-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, ամրացվող գույքի կազմը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի թեկնածությանը համաձայնություն տալու մասին» N 56-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 4-րդ կետով հաստատված N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 01-ից:

**Որոշումն ընդունվեց**

**19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր սահմանել 2018 թվականի սեպտեմբերի 11-ը ժամը 12<sup>00</sup>-ն:

**Որոշումն ընդունվեց**

**20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏԿԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄԻՑ ՍԵՐԺ ԱՋԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԶՐԿԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐՈՒ**



**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 8 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ «Գալա» խմբակցության անդամ՝ Ք.ՄԿՐՏՉՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 19

դեմ - 0

ձեռնպահ - 6 (Ա.Ադամյան, Հ.Կարապետյան, Լ.Խաչատրյան, Կ.Միքայելյան, Գ.Գրիգորյան, Տ.Հովհաննիսյան)

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերը տրամադրել մրցույթով կառուցապատման իրավունքով և սահմանել հողամասերի վարձավճարների մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

**Որոշումն ընդունվեց**

Սամվել Բալասանյանը չմասնակցեց քվեարկությանը:

**21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՅԻ» ԿՈՉՈՒՄԻՑ ՌՈՔԵՐՏ ՍԵՂՐԱԿԻ ՔՈԶԱՐՅԱՆԻՆ ԶՐԿԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 9 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ «Գալա» խմբակցության անդամ՝ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 19

դեմ - 0

ձեռնպահ - 6 (Ա.Ադամյան, Հ.Կարապետյան, Լ.Խաչատրյան, Կ.Միքայելյան, Գ.Գրիգորյան, Տ.Հովհաննիսյան)

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Զրկել Ռոբերտ Սեղրակի Քոչարյանին «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչումից:
2. Ուժը կորցրած ճանաչել Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2002 թվականի դեկտեմբերի 17-ի «ՀՀ նախագահի թեկնածու Ռոբերտ Սեղրակի Քոչարյանին «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչումը շնորհելու մասին» N 9 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

Սամվել Բալասանյանը չմասնակցեց քվեարկությանը:

**22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՅԻ» ԿՈՉՈՒՄԻՑ ԼԵՎՈՆ ԱԶԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԶՐԿԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 159-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ «Գալա» խմբակցության անդամ՝ Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

կողմ - 18

դեմ - 1 (Մ.Սահակյան)

ձեռնպահ - 6 (Ա.Ադամյան, Հ.Կարապետյան, Լ.Խաչատրյան, Կ.Միքայելյան, Գ.Գրիգորյան, Տ.Հովհաննիսյան)

Սամվել Բալասանյանը չմասնակցեց քվեարկությանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերը տրամադրել մրցույթով կառուցապատման իրավունքով և սահմանել հողամասերի վարձավճարների մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամներ**


Ս. Բալասանյան



Ա. Աղանյան




Հ. Կարապետյան



Լ. Խաչատրյան



Տ. Հովհաննիսյան



Մ. Սահակյան



Լ. Սանոյան




Վ. Եղիզարյան



Ա. Գրիգորյան



Գ. Սարգսյան




Կ. Միրայելյան




Գ. Գրիգորյան




Կ. Թաթարյան




Ս. Աստոյան




Ա. Խաչատրյան



Ա. Աղանյան



Ռ. Սարգսյան



Ա. Մխիթարյան




Ս. Մարտիրոսյան




Հ. Եղիազարյան



Լ. Բարսեղյան



Ք. Մկրտչյան




Ա. Գրիգորյան

Ա. Վարդանյան

Գ. Մաթևոսյան

Հ. Պողոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ք.Գյումրի  
«18» հունիսի 2018թ.